ԳՈՐԾԱԴՈՒԼԸ ԴԱԴԱՐԵՑՎԱԾ Է, ՇՐՋԱՓԱԿՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Ժամանակին խորհրդային ժողովուրդների եղբայրության օրհներգեր ձոնելիս չէինք գլանում Ադրբեջանին սահմանակից Երասխ կայարանը նշել իբրև Հայաստանի ապրանքային դարպասներ, բարեկամության դարպասներ: Այսօր այդ դարպասները փակ են. ոչ գնացք, ոչ ապրանք, ոչ էլ առավել ևս բարեկամություն: Եվ այն էլ այն ժամանակ, երբ դաժանագույն երկրաշարժ տեսած մեր հանրապետությունը սպասում է, շատ է սպասում բեռների. վերացաս ձմռանը հազարավոր ընտանիքների ցավը մեղմելու, օրերի գլուխը ձյունից պատսպարելու համար: Եվ մեր հարևանը ողբի ու դժբախտության օրը մոտ ու հանգարտ փակել է այդ բեռների առաջ, երբ ամբողջ աշխարհն է զբության ձեռք մեկնում մինչ երկրաշարժը շատ դեպքում չլսած ու չճանաչած Հայաստանին:

...Երասխ կայարանի աշխատողները կարոտով են նայում Նորաշենի ուղղությամբ, բայց ապարդյուն: Երբ գնացք չկա, էլ ինչի՞ կամ ո՞ւմ առջև վառես լույսի կանաչ աչքը, տարփոխես գույգ ռելսերը: Կայարանի հերթապահ Սուրիկ Նիկողոսյանը բերբում է մատյանը. սեպտեմբերի 4-ի ժամը 19 անց տասնուհինգ րոպեին Երևան—Թբիլիսի մարդատարը վերջին գնացքն էր երկու հանրապետությունների պողպատե հաղորդակցության այս փուլում: Դրանից հիշ առաջ էր եկել վագոն-տանկերով գնացքը, որի բեռը ոչ մեկին այլևս պետք չի եղել. Նորաշենում ջնջխված երեսուն տանկ թափված են գծերից դուրս: Իսկ աղետի գոտում դրանց ինչպես են սպասում, երեսուն ընտանիք տանիք կուենեար գլխին... Ինչևէ, ամեն ինչ ետևում է, այսպես կարծեցինք բոլորս, երբ «ժամանակ» ծրագրի էկրանին «երբեվեկում էին» գնացքները, իսկ Ադրբեջանի երկաթուղու բարձրաստիճան ներկայացուցիչը հավաստիացրեց, որ գործադուլը դադարեցված է: Բայց ափսոս, գնացքները տեղապտույտ են տալիս ու չեն հասնում Հայաստան:

— Այո, այդ հայտարարությունից հետո Հայաստան ոչ մի ապրանքատար գնացք չի մտել,— մեր թղթակցին ասաց Անդրերկաթուղու Երևանի բաժանմունքի պետի տեղակալ Ա. Ղազանչյանը,— մինչդեռ ժամանակին Նորաշենից օրական գալիս էր շուրջ հազար վագոն, իսկ 250-ն էլ Իջևանի ուղղությունից: Այնպես որ, թե գործադուլը ինչպես են դադարեցրել և ինչպես են լրացուցիչ աշխատում, որ հասցնեն բաց թողածը, ես չգիտեմ: Մի բան պարզ է, որ Հայաստան, առավել ևս աղետի գոտի հասցնագրված միլիոնավոր տոննաներով բեռները դեռ թափառում են ու չեն հասնում մեզ: Այո, Հայաստան ուղարկված միլիոնավոր տոննա ամենատարբեր ամենապետական ապրանքները հանգչում են կայարանների պահեստային գծերում ու փակուղիներում, իսկ Լենինականում ու Սպիտակում երեխաները բացօթյա են...

Ասում են ԽՍՀՄ հաղորդակցության ճանապարհների մինիստրը Ջուլֆայում է, բայց հայերի համար այնտեղ գնալը անհնարին է, թե չէ կարելի էր գնալ ու հարցնել.

— Այս պողպատե մայրուղին Խորհրդային Միությա՞նն է, բոլորի՞նը, մինիստրությա՞նը, թե՞ միայն Ադրբեջանինը...

Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

(Արմենպրեսի հատուկ թղթ.)

Արարատ—Երասխ կայարան